

լով սրանով, նորից միասին խմբորդ յարձակ-վում են փողոցի վրա և սկսում են կողոպտել թուրքերի խանութները, բայց բարեբաղդա-բար վերջինները կարողանում են վաղօրոք կող-պել իրանց խանութները և փախչել իրանց տը-ները: Միայն զոս գնացին մի քանի խանութ-ներ մինչև տեղալին զօրքի գալը: Հայ խանու-թապանները կառնով կամ ածուխով իրանց խա-նութների դռների վրա խաչեր էին գծել, որ յայտնի լինի թէ սրանք պատկանում են քրիստո-նեաներին, կողոպտողից ազատ մնալու համար: Երեկ և այսօր կուր առաւել սաստիկ էր, այնպէս որ տեղական զօրքը չը կարողանալով խաղաղա-ցնել, հարկաւոր եղաւ Ախալ-Թէքեան արշաւանքից վերադառնող զինուորների օգնութեամբ զիմել, որոնք հենց նոր էին դուրս եկել չոգենաւից: Բայց զինուորներին հրամայված էր չը խփել ոչ ոքին: Միայն այսօր ժամի 4-ին մի անգամ զին-ւորները հրացաններից արձակեցին, որից, ինչ-պէս ասում են, մի քանի մարդիկ են սպանվել: Կուրը այնքան սաստիկ էր, որքան աղմուկը, որի երկրկուց թուրքերը գրեթէ քաղաքից դուրս էին եկել երեկ և այսօր: Բայց պետք է ասած, որ թուրքերը, թէպէտ բոլորն էլ զինւորված են, չեն յարձակվում, այլ միայն պաշտպանողա-կան դիրք են բռնում: Սակայն այն թուրքը, որը բնակում էր ուռաների ձեռք, մեծ ծեծ էր ուտում: Պօլիցիականները թոյլ գտնվեցած խա-ղաղութիւն գցելու համար: Պօլիցիականների վրա մի քանի քարեր արձակվեցան, վաղուց է ար-դէն որ ոչ մի քրիստոնեայ, լինի նա ուսու, թէ հայ, չէ կարողանում ազատ չըջել փողոցում առանց ենթարկվելու հայհուդանքներին թուրք խանութպանների կողմից:

Ամբոխից կանչում էին չենք կամենում որ լինի քաղաքում մի հատ թուրք ոստիկան, կամ թուրք եսասու, նրանք թուրքերի կողմն են պաշտպանում:

Թէ որքան մարդ է զոս եղել այդ անկարգու-թիւններին՝ դեռ յայտնի չէ, բայց հազիւ վեցից պակաս լինի, բացի վերաւորվածներից, որոնց թիւը գուցէ շատ լինի: Չը գիտենք վաղը կուրը կը դադարի թէ ոչ, միայն բոլոր հայերը, որոնք մեծ մասամբ թուրքերի տնեւում են բնակվում, նրանք որոնք չեն մասնակցել կուրին, երկրկու մէջ են: Պակաս չեն վախում նոյն իսկ թուր-քերը:

Ներկանգագէ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Ապրիլի 17-ին

Այս տարի աշունքին, յոյս կայ, որ բացվի վաղուց հիմնած խարկովի Տեխնալոգիական ճե-մարանը:

Շաբաբը սկսեց թանգանալ և խարկովում: Այժմ այստեղ Բօբրինսկի շաբաբը ծախվում է պուղը 8 րուբլի, խարկովի ընկերութեան և Եախ-նենկայի ֆաբրիկային—7 ր. 80 կոպ:

Այստեղի հայ քահանան ժողովից մի քանի հա-յերին մէկի տանը ճաշի և իր տիրացու որդուն կարգաւ տուեց ուսուրէն տպած երգման թուղ-թը և ստորագրել տուեց: Հայից յետոյ հրք մի քանիսի գլուխները արդէն տաքացած էին, քահա-նան ժողովից յօգուտ իբրև թէ ազգային մի գործի մօտ 25—30 ր., և բացի դրանից ստո-րագրել տուեց մի խնդիրը յանուն Կաթողիկոսի, իբրև թէ տեղիս ժողովուրդը զոս է նրանից: Սրանից յետոյ երրորդ օրը ստանալով կոն-սիստօրիայից երգման թուղթը հայերէն լեզուով քահանան պատճառ չինեց իր համար կրկին տնե-րը այցելելու և փող ժողովելու՝ ստորագրել տալով հայերէն երգման թղթի վրա եւ:

Օգոստոս ամսին ուսուց մի ընկերութիւն մտադիր է չոգենաւով ճանապարհորդել հողադն-տի չորս կողմը: Այդ ընկերութեան մասնակցել ցանկացողները որպէս մէկ partie de plaisir բո-լոր յարմարութիւններով և չափաւոր ծախսով կը վայելեն ամենայն տեսակ գուարճութիւններ ինչպէս ճանապարհորդութեան ժամանակ, նմա-նապէս և նաւահանգիստներում: Բոլոր ճանա-պարհորդութիւնը կը տևի մէկ տարի կամ փոքր ինչ աւելի: Շոգենաւը կանցնի 46 կամ 48 հա-զար մղոն և կայցելէ մօտ 70 նշանաւոր նաւա-հանգիստ քաղաքներ և ամեն տեղ կը դադարի բաւականին ժամանակ, որպէս զի ճանապարհորդ-ները ունենան կարողութիւն լաւ ծանօթանալ հետաքրքիր տեղերի և բնակիչների հետ: Բայց հարցի վճեւը թէ որ կողմը գնալ առաջ՝ դէպի արեւելք թէ արեւմուտք և որքան ժամանակ մնալ:

Իւրաքանչիւր քաղաքում կը պատկանի բոլոր ընկերութեանը, որ բաղկացած կը լինի ճանա-պարհորդներից, որտեղ մասնակից կը լինեն և այս ընկերութեան հիմնողները և չոգենաւի մէջ ծառայողները: Շոգենաւի ճանապարհորդութիւնը կը լինի յարմարեցրած այնպէս, որ ճանապար-հորդներին նոյն իսկ ճանապարհին չը գտնվեն: ճանապարհորդութեան մէջ մասնակցելու համար գինը՝ բոլոր պաշարեղէններով, ծառաներով և ամեն տեսակ յարմարութիւններով նշանակած է 7,500 րուբլից մինչև 4,500 ր.: Ամեն ճանա-պարհորդ իրաւունք ունի տանել իր հետ ձրի մօտ 30 պուղ: Եթէ աւելի լինի վճարում է 4 ր. 50 կոպ, և աւելի ամեն պուղի վրա: ճանապար-հորդները կունենան իրանց համար ձրի ղեղանոց (аптека), բժիշկ, բժիշկի օգնական և բժիշկ կին: Ջուարճութեան համար կունենան չոգենաւի մէջ երաժիշտներ (10 մարդ) պ. կնիկի կառավարու-թեամբ և մի յայտնի երգչուհի, որ նայնպէս լինչպէս և պ. կնիկը կը տան միասին կոնցերտ-ներ չոգենաւում: Բացի դրանից չոգենաւում կը լինի պիանինո և ճանապարհորդները իրաւունք ունեն տալ կոնցերտներ. ներկայացումներ, պա-րի երեկոներ և այլն: Այս ամեն գուարճու-թիւնների համար կան արդէն յարմարութիւն-ներ: Աւելի մանրամասն տեղեկութիւնների մա-սին ցանկացողները կարող են դիմել խարկով (Харьковъ, I. Н. П. Баллинъ, Екатеринослав-ская улица, д. № 27):

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք պ. Վարդապետեանից 5 րուբլ, որից 3 րուբլ յօգուտ «Միացեալ ընկերու-թեան», իսկ 2 րուբլ յօգուտ Հայաստանի սո-վատանջների:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ 14-ին ապրիլի կուր ծագեց այդ քաղաքում քրիստոնեաների և մասնատակների մէջ: Մի կողմէին ուսու բան-ւորներն ու հայերը, իսկ միւս կողմ թուրքերը: Կուրը շարունակեց չորս օր: Չորս օր է քաղա-քի բոլոր խանութները փակված էին և փողոց-ներում խուռ խուռ չըջում էին զինուորները կարգը վերականգնելու համար: Նոյն քաղա-քից մի ուրիշ թղթակից նոյն հարցի վրա մի աւելի մանրամասն թղթակցութիւն է ուղարկել մեզ, որ և տպում ենք «Մշակի» ներկայ համա-րում:

«Юридическое Обозрѣніе» շաբաթերթը իր № 4-ի մէջ խօսելով այն ճառի մասին, որ ար-տասանել է Սպասովիչ Ս. Պետերբուրգի իրաւա-բանական ընկերութեան մէջ և որի մէջ նա բացատրել է տեղական լեզուների նշանակու-թիւնը դատարանում, ակնարկեցով զլիսաւորա-պէս Կովկասի, Լեհաստանի և Բալտեան նա-հանգների վրա, իրանից աւելացնում է: «Կատա-րանը պէտք է իստի այն լեզուով, որով խօսում է ժողովուրդը: Հարկաւոր չէ դրա մէջ դժուա-րութիւն տեսնել որ դատաստանական պաշտօն-ները այն ժամանակ դժուար կը լինի յանձնել բուն ուսու ծագումով անձինքներին: Անհամեմատ հեշտ է մի քանի հարիւր կամ հազար անհատներին սովորել օտար լեզուն, քան թէ միանգամից մատչելի դարձնել ուսուց լեզուն նրան չը հաս-կացող ամբողջին: Լեզուի հարցը Կովկասի հա-մար ահազին նշանակութիւն ունի»:

«Молва» լրագիրը դադարելու է իր գոյու-թիւնը և լրագրի ներկայ 1881 թվի բաժանորդ-ներին նրա փոխարէն կուղարկվի «Новости» լրագիրը:

Գնդապետ Գլօբոքիցին առաջարկում են 5000 րուբլ այն սահմակի համար, որի վրա տարվեցաւ վերաւորված թագաւորը: Բայց Գլօբոքիցին չէ կամենում ծախել այդ սահմակը, այլ իր համար է թողնում, որպէս յիշատակ:

Քաղաքական յանցաւորներին յանձնելու, ապաստանի իրաւունքը սահմանափակելու և աւա-հասարակ սօցիալիստների դէմ միջոցներ գործ-դնելու խնդիրները քննելու համար միջազգային կոնֆերենցիան, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը, կը կայանայ Բերլինում: Իսկ «Русский Курьер» լրագրին Վիեննայից հե-ռագրում են որ այդ կոնֆերենցիան բոլորովին չի կայանայ, որովհետեւ Անգլիան և Ֆրանսիան մերժել են մասնակցելու այդ միջազգային ժո-ղովին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԱ

Լրագիրների մէջ կարգում ենք հետե-ւեայր:

Պարլամենտական գործունէութիւնը արեւ-մտեան պետութիւնների մէջ զատիկ տօնե-րի պատճառով դադարել է: Ֆրանսիական ազգային ժողովները կը հաւաքվեն մայիսի 12-ին: 1877 թուականին ընտրված հան-րապետութեան ներկայացուցիչները կը հա-ւաքվեն իրանց օրէնսդրական գործունէու-թիւնը վերջացնելու համար, որ ամեն կող-մից օրինաւոր և օգտակար էր: Այժմեան պատգամաւորները հանրապետական հիմ-նարկութիւնները ազատեցին բազմաթիւ վտանգներից, շատ դժուարութիւնների ա-ռաջն առան, այնպէս որ նրանց յաջորդնե-րի գործունէութեան համար ճանապարհը կատարելապէս մաքրված է:

Ֆրանսիական լրագիրները զատիկ տօնե-րի առիթով ողջունեցին պատգամաւորնե-րի գործունէութիւնը բարի ցանկու-թիւններով: Լրագիրների կարծիքով, Ֆրան-սիան առիթ չունի անբաւական լի-նելու իր ներկայացուցիչներից: Իր գոր-ծունէութեան ժամանակամիջոցը լրաց-նող պատգամաւորների ժողովի զլիսաւոր ծառայութիւնը նրանումն է, որ նա վերջ-նականապէս հաստատեց հանրապետու-թիւնը և չըջապատեց նրան այնպիսի հիմ-նարկութիւններով, որոնք համապատասխա-նում են Ֆրանսիական ժողովրդի հան-ճարին: Թէպէտ դեռ շատ բան պէտք է անել զանազան ձգտումները հաշտեցնելու և ժողովրդական կեանքին այնպիսի ըն-թացք տալու համար, որ թոյլ չը տայ կրկնվել այն նշանաւոր անցքերին, որոնք պատահեցին Ֆրանսիայի մէջ վերջին դարի ընթացքում: Բայց զլիսաւոր բանը, ինչ որ պէտք է կատարվի մի հաստատված հան-րապետութեան մէջ, արդէն կատարված է: Ժամանակակից պետական գլխաւոր գործը, ժողովրդական կրթութեան գործը այնպիսի հաստատ հիմունքների վրա է դրված և այնպէս լաւ է կազմակերպված, որ շուտով ցոյց կը տայ իր բարեբար ազդեցութիւնը թէ երկրի մասւոր և բարոյական զարգա-ման և թէ նրա քաղաքացիական տոկու-նութեան վրա: Ֆրանսիական ժողովրդական ուսումնարանը ազատված է իր զլիսաւոր պակասութիւնից, որի շնորհիւ նա քաղա-քական մրցման ասպարէզ էր դարձել, և յայտնված է ձրի, պարտադիր և աշխար-հական, այսինքն կղերականների վնասակար ազդեցութիւնից ազատ: Ուսուցիչներին և ուսուցչուհիներին այնպիսի բաւականացու-ցիչ վարձատրութիւն է նշանակված, որ կը դրաւի ժողովրդական լուսաւորութեան հա-մար կատարելապէս արժանաւոր և յուսալի-ոյթեր: Ժողովրդական ուսուցչի և ուսուց-չուհու դրութիւնը պատուաւոր է դարձ-րած, ազատ կապուցանելով նրան վարչական կամայականութիւնից և զանազան անձանց գործունէութեան մէջ: Եթէ Ֆրանսիական պատգամաւորների ժողովը ոչինչ չանէր բա-ցի ժողովրդական կրթութեան մասին օրէն-քի հրատարակել, այնու ամենայնիւ նրա ծառայութիւնը ահազին և անմոռանալի կը լինէր:

Կղերական և միապետական շարժումնե-րի վառ ժամանակ ընտրված պատգամաւոր-ները, բացի այն, որ գրեթէ ոչնչացրին այդ շարժումները, անուշադիր չը թողին Ֆրան-սիայի ժողովրդական կեանքի միւս բաժին-ները: Պատգամաւորների ժողովը մշակեց և

հրատարակեց տպագրական օրէնքները, ո-րոնք ամենաազատամիտ են ամբողջ Եւրո-պայի մէջ: Այդ օրէնքները թէպէտ ամեն կողմից կատարեալ չեն, բայց նրանք ազատ են կապուցանում միտքը և նրա տպագրա-կան արտայայտութիւնը ամեն տեսակ սր-գեղեցնելից և հալածում են տպագրական այնպիսի խօսքը, որ զրգում է դէպի ապս-տամբութիւն և սպանութիւն, որ վերա-ւորում է հասարակական բարոյականու-թիւնը: Այս դէպքերումն էլ մամուլի գոր-ծունէութիւնը յանցաւոր է համարվում մի-այն այն ժամանակ, երբ նա ունենում է ապօրինի հետեւանքներ: Ամեն տեսակ մեռ-քերի և կարծիքների յայտնելը մամուլի միջոցով անպայման թոյլ է տուած, եթէ մինչև անգամ այդ կարծիքները արմատա-կանապէս զանազանվում լինեն ընդունված համազմունքներից: Դա մի ծառայութիւն է ոչ թէ միայն Ֆրանսիայի, այլ և ամբողջ Եւրոպայի համար, որ նայում է Ֆրանսիայի վրա իբրեւ մի առաջադէմ երկրի վրա:

Ոչ ոք չէ կարող ասել, որ քաղաքական նշանաւոր հարցերը այդքան լաւ ըմբռնող և յաջողութեամբ լուծող մի ժողով ստոր է իր կոչումից և չէ կատարել իր պարտա-կանութիւնը:

Իտալիայի մէջ մինիստրական դժուարու-թիւններ պատահեցան, բայց Լայրօլիի մի-նիստրութիւնը յաջող հանգիստացաւ և մինիստրական փոփոխութիւններ չեղան: Այդ հանգամանքը համոզեց Ֆրանսիային, որ նա առանց արգելքների հանգիստե-կարող է շարունակել իր նուաճողական քաղաքականութիւնը հիւսիսային Աֆրի-կայի մէջ: Ազդեցութիւն և կշիռ ունեցող Ֆրանսիական մի օրագիր ուղղակի յայ-տնում է, որ Ֆրանսիական զօրքերի ար-շաւանքի նպատակն է Տունիսը միացնել Ֆրանսիայի հետ: «Ալժիրը Ֆրանսիայի սե-փականութիւն չի կարելի համարել, աս-ված է իշխեալ օրագրի մէջ, մինչև մենք չը տիրապետենք Տունիսին: Աւելի հեշտ է նուաճել Տունիսը, քան թէ հանդիսանանք խուռմիրների ցեղը: Վանդէյան և կար-խանների պատերազմական փորձերը ապա-ցուցին, թէ որքան վտանգաւոր է կուսակ-ցական (բաժանված) պատերազմ սկսել: Ե-րեք շաբաթից յետոյ մենք կարող ենք Տու-նիսի մէջ լինել, մինչդեռ վեց ամիս հար-կաւոր կը լինի խուռմիրների հետ գործը վերջացնելու և նրանց պատժելու համար, իսկ այդ պատժը նրանք մի քանի տարի-ներից յետոյ կը մոռանան: Ուրեմն կաս-կածանքները և դատարկ խօսքերը ո-չինչ նշանակութիւն պէտք է չունենան: Տունիսին հովանաւորելը բուական չէ, պէտք է այդ երկիրը կատարելապէս և ան-դաւանալի կերպով միացնել Ֆրանսիայի հետ: Դա միակ միջոց է Աֆրիկան խաղաղեցնե-լու, Ալժիրը ապահովելու և քաղաքակր-թութեանը ծառայութիւն մատուցանելու համար»:

Ֆրանսիական մամուլի առաջա-ւոր ներկայացուցիչների այսպիսի դատո-ղութիւնները ի նկատի առնելով, դժուար է ենթադրել, որ Տունիսի հարցը խաղա-յի համար բաւականացուցիչ կերպով լուծ-վի:

Նորերում լրագիրները յարձակվում էին Ֆրանսիական պատերազմական մինիստր Ֆարրի վրա այն առիթով, որ զինուորա-կան տնտեսութեան մէջ մի քանի պակա-սութիւններ էին նկատվել «République Française» լրագիրը, պաշտպանելով յի-շեալ մինիստրին, յայտնում է, որ այս տա-րի պատգամաւորների ժողովից մի յայտնի գումար կը պահանջվի այժմեան պատե-րազմական ձեւը և զօրքերի դրութիւնը

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Мученическая кончина Императора Александра Николаевича.

ПОДРОБНОЕ ИЗЛОЖЕНИЕ ПРЕСТУПЛЕНИЯ 1-го МАРТА,

а также и послѣдовавших за онымъ событій.

При книгѣ картина въ Бозѣ почившаго Монарха на смѣртномъ одрѣ.

СОСТАВЛЕНО, ПО РУССКИМЪ И ЗАГРАНИЧНЫМЪ ИСТОЧНИКАМЪ, Д. М. СТОЛЫПИНЫМЪ.

(ВЪ КНИГѢ ВОСЕМЬ ОТДѢЛОВЪ.)

ОТДѢЛЪ ПЕРВЫЙ. Катастрофа 1-го марта. Вступленіе.—Правительственнымъ оповѣщеніемъ. Сообщенія «приближенныхъ лицъ». Восемь подробныхъ объявленій.—Чертежъ разрывнаго снаряда.

ОТДѢЛЪ ВТОРОЙ. Показанія очевидцевъ катастрофы. Разказы: Полковника Дворжицкаго. Штабсъ-капитана Новикова. Подпоручика Рудаковского. Мичмана Еркиновича. Мальчика-обойщика Дьяконова. Поручика Максимова. Очевидца Н. Н. Капитана Коха. Солдатки Авдотьи Давидовой. Матроса 8-го флотскаго экипажа. Подпоручика Крохоткина. А. Шенберга.

ОТДѢЛЪ ТРЕТИЙ. Мѣсто преступленія 1-го марта. Картина мѣстности въ моментъ взрыва.—Слѣды взрыва.—Гдѣ и кѣмъ брошены были метательные снаряды.—Что найдено на мѣстѣ преступленія.—Планъ роковой мѣстности.

ОТДѢЛЪ ЧЕТВЕРТЫЙ. Во дворцѣ. Выходы. Торжественныя церемоніи. Въ чьихъ саняхъ прѣхалъ раненый Государь.—Раны Его.—Послѣднія минуты Государя Императора.—Прѣздъ въ Зимній дворецъ Наслѣдника Цесаревича.—Возвращеніе Государя Императора Александра III въ Аничковскій дворецъ.—Покійный Государь въ опочивальнѣ.—Высочайшій выходъ Императора Александра III.—Его рѣчь.—Перенесеніе тѣла въ Бозѣ почившаго Императора Александра II изъ опочивальни въ соборъ Зимняго дворца.—Обстановка собора.—Высочайше утвержденный церемоніаль перенесенія тѣла въ Бозѣ почившаго Императора Александра II изъ Зимняго дворца въ Петропавловскій соборъ.—Моментъ перенесенія.

ОТДѢЛЪ ПЯТЫЙ. Мина на Малой Садовой. Первые извѣстія о минѣ.—Преступникъ Кобышевъ.—Лавка и квартира его.—Жена Кобышева.—Устройство и зарядъ мины.—Работы по вскрытію мины.—Планъ мины.

ОТДѢЛЪ ШЕСТОЙ. Слѣдствіе надъ предстопниками; аресты ихъ. Мѣщанинъ Рысаковъ.—Кто онъ таковъ.—Аресты въ Телѣжной улицѣ.—Застрѣльщикъ.—Преступникъ Михайловъ.—Руководитель шайки террористовъ—Желябовъ.—Кто бросилъ вторую бомбу.—Милордъ Тригони.—Арестъ Желябова.—Другіе аресты.—Кто производитъ слѣдствіе.—Какъ идетъ слѣдствіе.—Правительственное сообщеніе.

ОТДѢЛЪ СЕДЬМОЙ. Пострадавшіе во время катастрофы. Раненіе.—Скончавшіеся. Соучастники злодѣянія, бросившія вторую бомбу.—Полковникъ Дворжицкий.—Слѣдствіе въ покойницкой.—Кончина мальчика Захарова.—Публичное отпѣваніе казака старообрядца.

ОТДѢЛЪ ВОСЬМОЙ. Мелкія извѣстія. Слухи, толки, сообщенія и т. д., Заявленіе студентовъ Горнаго Института.—Люди съ бѣлыми узелками.—Уловка и дерзость Рысакова.—Кто задержалъ его.—Странное обстоятельство—убитые голуби и коршунъ.—Извѣстія о пидюлахъ.—Подробности о нихъ.—Письмо бельгійскаго доктора къ Государю Императору.—Экспертиза метательныхъ снарядовъ.—Рошфоръ у Драгоманова.—Увѣдомленіе амстердамскаго ф-бриканта лабораторныхъ снарядовъ.—Письмо доктора Дворянина.

Цѣна книги 1 р.; съ пересылкою 1 р. 20 к.

Продается у книгопродавца-издателя Ив. Фед. Морозова, Москва, Николаевская ул., д. Графа Орлова-Давыдова а также и у другихъ извѣстныхъ книгопродавцевъ Москвы и Петербурга.

Կ երանդինեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մագեր լարանդի և երանդ ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ ԳԵՐԱՊԱՐՈՒՄ ԶՆՈՂ ԳԻՆՐ 2 ր. 20կ, ՓՈՍՏԱՆՑՈՎ ուղարկած 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ լանուժի մէջ:



Մի և նոյն տեղը ԻԻՆԱՅԻ ԻԻԿ, մագեր լարանդի և ԶԱՄԱՐ, 1 ր. ամսը քիճի գլխաւոր ԳԵՆԸ, ՏՈՒՍԼԵՏԻ ՍԱՊՈՒՆ և Տոսուէա Տրեր և այլն: 57—100

Վ ԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ և ծախվել. վարտիքներ 4 ր., ամրոջ Տաղուտ 14 ր. և աւելի, արիկ և պարտի-նա 75 կ. արշինը: Նոր ձեռի հրացաններ 45 ր. 60 ր. և 100 ր., քէփօլիներ 4—40 ր., գլխարկներ 1 ր., թամբեր 30 ր. և աւելի, կոնեաի առաջին տեսակի 2 ր. շէշ, հին պորտաւէյն և խերես 1 ր. 40 կ., շամ պայն գինի 3 ր., կոնֆէկաներ 35 կ. Փռնաւոր, շոկոլաւ-Ֆրայի 1 ր. 20կ. անդ. Փռնաւոր և թէյ առանց թղթի 1 ր. 60 կ. Փռնաւոր, ամենալաւ Մոսկուայ 2 ր. 20 կ. Թղթով: ՄԻՆԵՆՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ մահճակների, մատուցարանների, կողպէքների, դանակների, գզայների, գրիչների, թուղթ, կէծեր, ձիւսանար, քիճի, ամաններ, բաժակներ, մաւրաններ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ լանուժիներում:

11—15

Բոստոնի Ամերիկայի տաւարական մագազինում, ծախվում է: Աւարտայի բիւրի գերանդիք (կոսաներ) հարիւր հատն 55 րուր լիով: Գոթոգոյա փողոց գալէէյ Արծրունի:

1—10

ՄԻՆԶԵԻ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՁԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐԲԵՐԸ:

- 1) Երկու մանրակէպ. Արֆոնս Գոգէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
- 2) Պոգնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան. 20 կ.
- 3) Պարապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
- 4) Ճանապարհորդութիւն Լարաբաղում, Արցախից: 30 կ.
- 5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանի: 15 կ.
- 6) Կարա խոսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան: 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ: Առանձին մէկի համար բաժանորդաշրջութիւն չէ ընդունվում, բացի «Գնար խոսնակից» արի համար առանձին կարելի է ստորագրել և քննակալ հինգը առանձին: Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան:

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրախառնակող ջուռ:

1. Հայր և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դասախոսութիւն ընթերցում թիֆլիսի ժողովարանում Արգար Յովհաննէսեանի. թիֆլիս, 1881 թ. գ. 30 կոպ.
2. Նոյն տեղը վաճառվում են: Միութիւն Հայրութեան, Բանաստեղծութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օրմանեան, արտասանեալ ի յարանին կրթատիրաց ընկերութեան Յիսակեատար ի 17-ին նոյեմբերի 1879 թ., Կ. Պոլիս գ. 45 կ.
3. Տեղեկագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայո Հ. Ներսէսի Սարգսեան Միութիւնական փարդապետի, Վենետիկ գ. 4 ր.
4. Ստորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ղուկ. փարդ ինձիճեան ի Միութիւնական Միաբ. ըստ հին և ըստ միջին դարու անուննայ ժամանակաց ի Վենետիկ գ. 5 ր.
5. Պատմութիւն Արիստակէայ փարդապետի Լատիփերդցի, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.
6. Մեծին Գրիգորի Առջնոյն Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.
7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղօթք, Վենետիկ գ. 2 ր.
8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ փարդապետի յուսարանեայ Վենետիկ գ. 2 ր.
9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեկարութիւն յամի 1876 Արշակայ Մ. Արթուրեան Ֆոքան գ. 1 ր. 20 կ.
10. Սոգ. Կենտրոն Գրիգորեան ի Մահի Արեւի, թարգմանեալ Տեառն Հ. Մանուկի Վ. Զախարեան ի Միութիւնական միաբանութիւնէ, Վենետիկ գ. 1 ր. 75 կ.
11. Առակք Միութեայ Գոշի, Վենետիկ գ. 1 ր.:

Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկ տօներին նուիրելու զանազան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառալիկա՛վ դրքեր, Ֆրիքեկեան խաղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն:

Օտարաբարդացիք ճանապարհի ծախք են վճարում 10% առանց փողի պատուէրները չեն կտարվում:

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ

Հաւանականք թէյի ֆռնաւոր	1 ր. 5 կ.	Սոսկիպից բերվող թէյի հետ	Փ. 1 ր. 30 կ.
—	1 ր. 10 կ.	—	Փ. 1 ր. 40 կ.
—	1 ր. 20 կ.	—	Փ. 1 ր. 60 կ.
—	1 ր. 40 կ.	—	Փ. 1 ր. 80 կ.
—	1 ր. 60 կ.	—	Փ. 2 ր. —
—	1 ր. 80 կ.	—	Փ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Փ. 3 ր. —

72—100

ԻՆՁ Է ՊԱՏՃԱՆՈՐ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԿԱՐՁԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մաւրազինը ստանում է թէյ ուղղակի պլանատարներէրից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի դործարաններից և բաւականաւորում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆռնաւոր թէյ առաջին տեսակի, կակաօ և շոկոլադ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկաներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, քէփօլիներ, կողպէքներ, մատուցարաններ, առաններ, զանաւներ, գզայներ, թէյամաններ, բաժակներ, թմաքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակնիտօշներ, կարկնիք, թուղթ, մատիտներ, տետրաքներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու գալլէրէում 100—87

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ծրծի: Մեքենաներ 1 ր., բաժակներ 12 կ., ՋՐԱՄԱՆՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒՆՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՃԱԿԱՆՆԵՐ 5—50 ր., Ժիլաններ 75 կ. փարդի-

ներ 4 ր., ՄԱՆԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ 1 ր. տղամարդկանց 14 ր., ԳԼԽԱՐԱՆՆԵՐ 1 րուր, մակնիտօշներ 6 ր., հին պորտաւէյն և խերես 1 ր. 20 կ. շէշ, կոնեաի առաջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԼԿՈՒԼԻ 50 կ., թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒՆԱԿԱՆ ԹԷՑ 1 ր. 40 կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ. ԱԼԲՈՒՆԵՐ շատ էժան: 3—15

ՇՈՒՇՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ
«ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱՋԸ»
անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 դեռ լայն չը տեսած բանաստեղծութիւններ:

Օտարաբարդացիք կանխիկ մէկ բուրդ ուղարկելով, զիմում են ուղղակի հեղինակին հետեալ հասցեով.

«Презъ Просковейское Почтовое, отдѣленіе въ городѣ Святаго-Креста (Савранполье. губ.). Учителю Семёну Сафарянну.»

Կ. և Զ. ՊՈՊՈՎ ԵՂ ԲԱՅՐԵՆԵՐԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԷՋ: Ամենակարճ ժամանակամիջոցում մենք կը բանաւք թիֆլիսի մէջ մեր առեւտրական տան թէյի վաճառումն մեծ քանակութեամբ և մաս մաս: Խանութը կը լինի Գոլովնայայ փողոցի վրա Միրմանովի տանը: Խանութը կը ստանայ ԱՄԵՆԱԼԻ ԹԷՑ, որ կշափած կը լինի Մոսկուայի մեր գլխաւոր լանուժի մէջ մեր անձնական ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ: 4—5 (2)